

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻԻԹ. ՀԱՐՑ ՍՈՒԳԸ

ԳԵՐՊ. Գ. ԳՈՎՐԻԿԵԱՆ ԱԲԲԱՀԱՅՐ ՎԱԽՃԱՆԱԾ

Երեկ (22 օգոստոս) հեռագրին յանկարծական բօծը մեզի կը գուժէր մահը ԳԵՐՊ. ԳՐԻԳՈՐ Վ. ԳՈՎՐԻԿԵԱՆԻ, տիտղոսաւոր Արքեպս. Մծբնայ եւ Ընդհանրական Աբբայ Վիեննական Միութեան Հարց:

Բոյր Միաբանութեան ցաւը՝ ըլլալով նաեւ մերը, փութացինք էջ մը գողնալ աւարտ հասած թերթէս, ուր կ'արձանագրենք մեր խորին ցաւակցութիւնը, ինչպէս նաեւ միութեան խօսքը ամբողջ միաբանութեան՝ սիրելի հոր մը կորուստին ցաւէն սփոփելու:

Ազնուական տիպար մըն էր Արքի հանգուցեալը, եւ համեստութեան քօղին տակ ծածկած էր ոչ աննշան ծիրքեր՝ վարչական ու գրական. երկուքին մէջ ալ անբասիր եւ յաջող հանդիսացաւ նա:

Անոր իննամամեայ կեանքին գեղանի արշալոյսը Կերլայի մէջ ծագեցաւ 1841ին՝ Հարազատ զաւակն էր ան հազարումէկ եկեղեցիներու պաշտելի Անիի գաղթականութեան. եւ Ֆիլդը այդ հայ ոգին էր որ վերարծարծելու կը դառնար իր հայրենակիցներուն մէջ երեսնամեայ (1879-1909) առաքելական գործունէութեան շրջանով:

Փափուկ եւ կարեւոր շրջանի մը մէջ, անմահանուն Այտնեանէ յետոյ, վեցամեայ թափուր անոռը պայծառացնողը իր մէջ տեսաւ իր Ուխտը. եւ արդարեւ իմաստութեամբ եւ խոհեմութեամբ վարեց Միաբանութեան դէպք շուրջ քսան տարի (Աբբայ հայր ընտրուած էր 1909, 19 օգոստոս):

Հարկ չկայ ըսել թէ որքան զոհողութիւն պահանջեց պատերազմի հզնաժամը. եւ սակայն իմաստուն առաջնորդը տոկարով անվարան՝ փոթորկէն վերջ նորէն կեանք տուաւ իր Ուխտին՝ գրական, դպրոցական ու առաքելական ասպարէզներուն մէջ:

Արքի հանգուցեալը հայ գրականութեան մէջ իր անունը կը յաւերժացնէ պատմական կրկին մեծագին գործերով. «Գրանսիրականիոյ Հայոց Մետրապօլիտը կամ Նկամուպոլիս Գրանսիրականիոյ» (Armenopoli) (1893), եւ եռամստոր «Հայք յեղիսաբեթ» (1893-1904), գործեր որոնք իրենց պատկանին Յովսէփ-Իզմիրեանց մրցանակով:

Տուած է մէկ երկու երկրորդական գործեր ալ, ինչպէս Ընդհ. պատմութիւն մը՝ հրատ. «Բանալի արքայութեան», Թրգմ. «Այցելութիւն Ս. Հաղորդութեան» (Ս. Ա. Լիգուրեայ), եւն: ինչպէս եւ աշխատած է, ընդհանրապէս ծածկանունով, «Եւրոպա», «Բազմալէպ», եւ Կ. Պոլսի «Արեւելք»ին:

Մինչ վաստակաւոր եւ արդիւնալի հանգուցեալին յաւիտենական երանութիւնը, իր որբացեալ Ուխտին ալ կը մաղթենք նոր Հայր մը՝ վերցնելու այս ծանր սուգը եւ իր նախնեաց լուսաւոր շաւիղներով առաջնորդելու Միութեան հաստատութեան այս երկրորդ Ֆիլդը՝ նոյն մեր երանաշնորհ հարազատ հոգեւով ու նպատակով:

Խմբագրութիւն

ՄԻԼԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Միլանի մէջ առաջին հայ ուսանողները երեւցած են 1923ին, իսկ «Միլանի Հայ Ուսանողական Միութիւնը» վերջնականապէս կազմուած է 1924ին սկիզբը՝ համախմբուած բաւականաթիւ ուսանողներու միահամուռ փափաքով եւ աշխատակցութեամբ:

Առաջին անգամն էր որ Միլանի մէջ Ուս. Միութեան մը հիմը կը դրուէր. այդ իսկ պատճառ կ'ըլլայ որ մեր Միութեան հիմնադիրներու աշխատանքը դժուարին՝ բայց արդիւնաւոր ըլլայ: Անհրաժեշտ էր միջավայրի պայմաններու եւ մեր իրականութեան պահանջներուն համաձայն ոչնչէն ծրագրի մը պատրաստել, ուժ տալ կազմակերպչական գործին եւ մանաւանդ անհրաժեշտ էր ստեղծել ազգային մարտիկ եւ գիտական ոգի մը որ հետագային աւանդութիւն մը դարձած՝ Միութեան մղիչ եւ ուղղիչ թաքուն բայց զօրաւոր ազդակը պիտի հանդիսանար:

Ներկան՝ եւ կը հաւատանք որ ապագան ցոյց պիտի տան թէ որքան յաջողած են մեր հիմնադիր եղբայրները:

Ի սկզբան, Միութեանս գործունէութիւնը եղած է զգալիօրէն սահմանափակ, հասկնալի պատճառներով:

Սակայն տարուէ տարի թէ նոր անդամներու յաւելումը, թէ հիններու ձեռք բերած փորձառութիւնը՝ կազմակերպչական եւ գործնական գեղիներու վրայ եւ թէ այն սէրն ու հաւատքը որ գեղեցիկ նպատակներու ինքնանուիրումէն կը ծնին, Միութեանս տուած են ուժեղ կազմուածք, զարգացուցած են համերաշխութեան ոգին եւ Միութիւնը դրած քիչ մը աւելի լայն հողի վրայ:

Միլանի Հայ Ուսանողական Միութիւնը՝ միակ կանգուն եւ գործող կազմակերպութիւնը այն պիտի շրջանի մը երբ նոյն քաղաքին մէջ Ազգային Վարչութիւնը անկազմ վիճակի մէջ էր, գործեց մտերիմներու օժանդակութեամբ եւ ընդառաջ գնաց գաղութային պահանջներուն, երիտասարդաց Միութեան կազմութեան եւ անոնց ազգային մշակութային դաստիարակութեան, որբերու օգնութեան, Շիրակի աղէտեալներու ի նպաստ հանգանակութեան:

Կազմակերպեց ազգային նոր ու նորագոյն տօներու եւ թուականներու առթիւ հանդէսներ:

Հիմը դրաւ Միլանի մէջ Ազգային Գրադարանի մը կազմութեան՝ ուր կը գտնուին այսօր 1100ի մօտ գրքեր, մեծ մասամբ Հայերէն:

Երեք տարիէ ի վեր ունինք մեր հաւաքոյթները, ուր տեղի կ'ունենան զեկուցումներ ազգային եւ օտար մշակութային հարցերու շուրջ:

Այսօր Միութիւնս ունի 37 անդամներ, որոնց 32ը գործօն, իսկ մնացեալներն ալ իբրեւ պատուէր, բարերար ու համակիր անդամներ:

Գործօն անդամներէն ուսանողները կը հետեւին այլազան մասնագիտութեանց՝ ինչպէս — բժշկութիւն, ճարտարագիտութիւն, ճարտարաբանական քիմիաբանութիւն, դեղագործութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն եւայլն:

Միութեանս մշտական բաղձանքն ու նպատակը եղած է համախմբուած տեսնել՝ պատրաստուած եւ մշակուած ծրագրի մը շուրջ աշխարհի չորս հովիտներու մեր բոլոր ուսանող ընկերները, երիտասարդի անհաճախողի, համարձակ եւ խանդավառ ուժերով հաւաքական դործունէութիւն բերել այսօրուան եւ վաղուան հայ իրականութեան:

Յառաջիկային Միութեանս հրատարակելիք «Տեղեկատու»ին մէջ՝ արտասահմանի հայ ուսանողներու թիւը կարենալ ծանօթացնելու համար, կոչ կ'ընենք բոլոր հայ ուսանողներու որ հաճին իմացնել իրենց հասցեն եւ մասնագիտութիւնը:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Մեր հասցէն՝ *Unione Studenti Armeni*

Viale Umbria 62 MILANO